

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՇՈՏ ՌՈՒԲԻԿԻ ԹՈՎԱՄԱՅԱՆ

ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և  
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության  
սեղմագիր

Ե Ր Ե Վ Ա Ն 2 0 1 7

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման  
ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր  
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տ.գ.դ., պրոֆեսոր  
Վարդան Բաբկենի Բոստանջյան  
տ.գ.թ. Առն Մուշեղի Ավագյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. նոյեմբերի 24-ին, ժամը 13<sup>30</sup>-ին, Երևանի  
պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտու-  
թյան թիվ 015 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի  
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է՝ 23 հոկտեմբերի 2017թ.

015 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար, տեխն. գիտ. դոկտոր



Ա. Ա. Առաքելյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տնտեսության և բանակաշինության բարեփոխումների կարևորագույն ոլորտներից է ռազմարդյունաբերությունը, որի զարգացումը պահանջում է զգալի փոփոխություններ մի շարք հարակից ոլորտներում: Ռազմարդյունաբերության ոլորտը տնտեսության զարգացման լոկոմոտիվն է:

Անկախությունից հետո Հայաստանի Հանրապետությունում ընտրվեց շուկայական տնտեսության անցման արմատական ուղին: ՀՀ-ը տնտեսական վերափոխումները սկսեց արտադրության մեջ կտրուկ կրճատելով իր դերը և գերակշռող դարձնելով մասնավորի դերը, դրանով իսկ ձգտելով ավելի խթանել տնտեսական զարգացմանը<sup>1</sup>: Ռազմարդյունաբերական համալիրի բազմաթիվ պետական ընկերություններ մասնավորեցվեցին, որոնց մեծ մասը կարճ ժամանակ անց դադարեց ռազմական պատվերներ կատարել, որոշ մասը կորցրեց իր արտադրական հզորությունները, որոշ մասը լուծարվեց:

ՀՀ ռազմարդյունաբերության ոլորտի բարեփոխումները սկսվել են ՀՀ Նախագահի կողմից 2010թ. մարտի 30-ին հաստատված «ՀՀ պաշտպանական բարեփոխումների 2010-2015թթ. պետական ծրագրով», համաձայն որի ՀՀ պաշտպանության նախարարության ռազմարդյունաբերական վարչությունում մշակվել է «ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի բարեփոխումների և զարգացման հայեցակարգ»-ը և հաստատվել է ՀՀ նախագահի 2011թ. դեկտեմբերի 29-ի №ՆԿ-231-Ն հրամանագրով<sup>2</sup>: ՀՀ ազգային ժողովի կողմից 2015թ. մարտի 25-ին ընդունվել է «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենք<sup>3</sup>: ՀՀ վարչապետի 2015թ. հուլիսի 24-ի №668-Ա որոշմամբ<sup>4</sup> հաստատվեց «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը, համաձայն որի ընդունվել են ոլորտը կարգավորող ՀՀ Կառավարության մի շարք որոշումներ:

Չնայած իրականացված աշխատանքներին<sup>1</sup> այսօր առկա են ոլորտի զարգացման մի շարք խոչընդոտներ: Դրանցից են՝ երկարաժամկետ նպատակային ծրագրերի բացակայությունը, ոլորտի կազմակերպություններում տնտեսության կառավարման ներկա ձևին համապատասխան մենեջերների բացակայությունը, հիմնարար երկարաժամկետ գիտահետազոտական աշխատանքների պայմանագրերի կնքման կառուցակարգերի բացակայությունը, կառավարման ավտոմատ

<sup>1</sup> Ս. Դավոյան, Ա. Մարկոսյան, Հ. Սարգսյան, Վերափոխումները անցումային երկրների փոփոխություններում, Եր., Տիգրան Մեծ, 2003թ., էջ 207:

<sup>2</sup> ՀՀ Նախագահի կարգադրությունը ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի բարեփոխումների և զարգացման հայեցակարգը հաստատելու մասին, ՆԿ-231-Ն, 2011թ.

<sup>3</sup> «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-16-Ն, 2015թ.

<sup>4</sup> ՀՀ վարչապետի որոշումը «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին, № 668-Ա, 2015թ.

տացված համակարգի բացակայությունը, բնակչության արտագաղթը, կադրերի պատրաստման համակարգի թերությունները: Բացի այդ չկան նաև ոլորտի զարգացման վերաբերյալ կատարված ծավալուն գիտահետազոտական աշխատանքներ: Այդ իսկ պատճառով, նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ոլորտի կայացման, կառավարման ու զարգացման տեսամեթոդական հարցերը, հայրենական և միջազգային փորձը, վերլուծել ոլորտի առկա վիճակը, զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, որոնց հիման վրա հնարավոր կլինի մշակել և առաջարկել դրանց լուծման հիմնական քայլերը: Ուստի, հաշվի առնելով վերոնշյալը, սույն հետազոտությունը կարելի է համարել խիստ արդիական և հրատապ:

**Հետազոտության օբյեկտը** ՀՀ ռազմարդյունաբերական համալիրն է՝ իրեն բնորոշ բնութագրիչներով և առանձնահատկություններով:

**Հետազոտության առարկան** ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի կառավարման և զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիներն են:

**Հետազոտության նպատակը** ՀՀ-ում ռազմարդյունաբերության ոլորտի արդի հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրության և վերլուծության հիման դրա կառավարման կատարելագործման համար անհրաժեշտ տեսական և գործնական հիմքերի, առանձնահատկությունների բացահայտումն է և կառավարման կատարելագործման հիմնական ուղղությունների մշակումը:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել ռազմարդյունաբերական համալիրի ձևավորման, կայացման և կառավարման տեսամեթոդական հիմքերը և կառուցակարգերը,
- հետազոտել ռազմարդյունաբերության կառավարման և զարգացման միջազգային փորձը,
- վերլուծել ՀՀ-ում ռազմարդյունաբերական համալիրի արդի վիճակը, և զարգացման հիմնախնդիրները,
- ուսումնասիրել ՀՀ ռազմարդյունաբերության ոլորտի օրենսդրաիրավական դաշտը՝ բարելավման ուղղությունների բացահայտման նպատակով,
- վերլուծել ռազմարդյունաբերության ոլորտի գնային քաղաքականության արդյունավետությունը,
- բացահայտել ռազմարդյունաբերական համալիրի կառավարման կատարելագործման ուղիները:

**Հետազոտության գիտական նորույթը և արդյունքները:** Հետազոտության արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական ուղղվածություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- ❖ Հիմնավորվել է ռազմատնտեսագիտության՝ որպես առանձին գիտա-

կան ուղղության կիրառման անհրաժեշտությունը՝ ՀՀ բանակաշինության, պետության պաշտպանունակության ապահովման տնտեսական հիմքերի ստեղծման և համալիր զարգացման համար, սահմանվել են ռազմատնտեսագիտության հետազոտության սուբյեկտները, ուսումնասիրության ոլորտը, գերակա խնդիրները, դրանց լուծման համար անհրաժեշտ միջոցառումները:

❖ ՀՀ ՊՆ ռազմարդյունաբերության պետական կոմիտեի ներկայիս կառավարման կազմակերպական կառուցվածքի և դրանից բխող հիմնախնդիրների, ինչպես նաև միջազգային փորձի վերլուծության արդյունքում առաջարկվել է դրա կառավարման կազմակերպական նոր կառուցվածք, մշակվել են վերջինիս ստորաբաժանումների հիմնական գործառույթները: Կոմիտեի ենթակայությամբ հիմնավորվել է «ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի միասնական նյութատեխնիկական մատակարարման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ստեղծման անհրաժեշտությունը, մշակվել են ՊՈԱԿ-ի և ՌԱՀ-ի կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների կառուցակարգերը, խնդիրներն ու գործառույթները, հիմնավորվել են ՊՈԱԿ-ի պահպանման համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցների աղբյուրները և ՊՈԱԿ-ի ստեղծման ակնկալվող արդյունքները:

❖ ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի կառավարման օպերատիվության բարձրացման նպատակով առաջարկվել և հիմնավորվել է ՀՀ ՌԱՀ սուբյեկտների կառավարման ավտոմատացված համակարգի ներդնումը, սահմանվել է դրա էությունը, նպատակը, խնդիրները, մշակվել են դրա ենթահամակարգերը, հիմնական բաղադրիչները, համակարգին ներկայացվող պահանջները: ՀՀ ՌԱՀ-ի կազմակերպությունների կառավարման բարելավման նպատակով առաջարկվել է դրանց միավորումը պետական կոնցեռներում, հիմնավորվել է ռազմարդյունաբերական համալիրի ընկերությունների՝ կոնցեռներում միավորելու առավելությունները, ինչպես նաև առաջարկվել են ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի կոնցեռների ուղղությունները:

❖ ՀՀ ՌԱՀ-ի տարիների փորձի և արդի վիճակի վերլուծության արդյունքում առաջարկվել է հարկ եղած դեպքում կիրառել հավատարմագրային կառավարման սկզբունքները ռազմարդյունաբերական համալիրի պետական ընկերություններում՝ որպես մասնավորեցմանն այլընտրանք, հիմնավորվել է դրա կիրառելիությունը:

### **Հետազոտության տեսական և մեթոդական հիմքերը:**

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են ռազմարդյունաբերության ոլորտի տեսական և մեթոդական հարցերին նվիրված օտարերկրյա և հայրենական գիտնականների աշխատություններն ու հոդվածները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքագրման և խմբավորման, վերլուծության և համադրության, համեմատական վերլուծության, համադրությունների և դատողությունների, միկրո և մակրո վերլուծության և SWOT վերլուծության մեթոդները:

**Հետազոտության տեղեկատվական հիմքը** ներառում է ՀՀ ՊՆ ռազմարդյունաբերության պետական կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը, ՀՀ և այլ երկրների՝ ոլորտին վերաբերող օրենքները և նորմատիվ իրավական ակտերը, ՀՀ կառավարության և պետական կառավարման մարմինների ծրագրերը, ինչպես նաև ոլորտին վերաբերող գիտական հանդեսներում և մամուլում պարբերաբար հրատարակվող տեղեկությունները:

**Հետազոտության գործնական նշանակությունը և կիրառումը:**

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ ՊՆ ռազմարդյունաբերության պետական կոմիտեի կողմից՝ ռազմարդյունաբերության համալիրի զարգացման պետական քաղաքականության իրականացման, ոլորտի կառավարման կատարելագործման նպատակով, ինչպես նաև՝ ՌԱՀ կազմակերպությունների կողմից՝ կառավարման բարելավման և զարգացման ծրագրերի մշակման նպատակով:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:**

Ատենախոսության հիմնական դրույթները զեկուցվել և քննարկվել են ՀՀ ՊՆ-տական կառավարման ակադեմիայի «Կառավարման» ամբիոնի նիստում: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել և զեկուցվել են նաև ՀՀ ՊՆ ռազմարդյունաբերության պետական կոմիտեի ղեկավարությանը: Ատենախոսության մի շարք առաջարկություններ ընդունվել և ներառվել են ՀՀ ՊՆ ռազմարդյունաբերության պետական կոմիտեի առաջիկա տարիների աշխատանքների կազմակերպման միջոցառումների ծրագրերում: Ատենախոսության արդյունքներն արտացոլվել են հեղինակի 9 գիտական հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը շարադրվել է 153 էջի վրա, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիակա- նությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպվել են հիմնական գիտական արդյունքները ու նորույթը, դրանց տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

**Ատենախոսության առաջին՝ «Ռազմարդյունաբերական համալիրների ձևավորման և կայացման տեսամեթոդական հիմքերը»** գլխում ներկայացվել և քննարկվել են ռազմարդյունաբերության էությունը, առանձնահատկությունները, վերլուծվել և գնահատվել են ռազմարդյունաբերական համալիրի կառավարման

և զարգացման արդի միտումները և միջազգային փորձը (Ռուսաստանի, Իսրայելի, Ադրբեջանի, Թուրքիայի և Բելառուսի օրինակով):

Ռազմարդյունաբերական համալիրի հասկացությունը առաջին անգամ օգտագործվել է ԱՄՆ նախագահ (1953-1961թթ.) Դուայտ Դ. Էյզենհաուերի կողմից, ռազմական շրջանակների, պետական հիմնարկների և ռազմական արդյունաբերության հետ կապված կորպորացիաների հզոր միավորումների սահմանման համար<sup>5</sup>:

«Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ ենթակետում ռազմարդյունաբերական համալիրը սահմանված է որպես գիտական, գիտաարտադրական, արտադրական և այլ բնույթի կազմակերպությունների ու պետական մարմինների համակարգ, որի գործունեությունն ուղղված է պետության ռազմատեխնիկական քաղաքականության կենսագործմանը<sup>6</sup>:

Ռազմարդյունաբերությանը բաժին է ընկնում համաշխարհային արդյունաբերության 5 տոկոսը<sup>7</sup>: Ռազմարդյունաբերության բնութագրիչ գծերից և առանձնահատկություններից նշենք՝

- պատվիրատուները հանդիսանում են ոչ թե մասնավոր կազմակերպությունները, կամ քաղաքացիները, այլ պետական մարմինները,
- ոլորտը գտնվում է պետության ուղղակի կարգավորման ներքո:

Ռազմարդյունաբերության, սպառազինության և ռազմական տեխնիկայի համաշխարհային շուկայի ձևավորման և զարգացման հիմնական գործոններն են՝ համաշխարհային ռազմաքաղաքական իրադրությունը, գիտատեխնիկական առաջընթացը, երկրների տնտեսական վիճակը:

**Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի կայացման և զարգացման առանձնահատկությունները»** գլխում վերլուծվել է ՀՀ-ում ռազմարդյունաբերական համալիրի կայացման փուլերը, արդի վիճակը, բարեփոխումները, կառավարման համակարգը և օրենսդրական դաշտը, բացահայտվել են զարգացման միտումները և առկա հիմնախնդիրները, կատարվել է ոլորտի զարգացման SWOT վերլուծություն:

Անկախությունից հետո ռազմարդյունաբերության կայացման գործընթացը դյուրին չէր և ընթանում էր ԽՍՀՄ փլուզման բարդ քաղաքական, ի վերջո ռազմական կոնֆլիկտի վերածված, հակամարտության պայմաններում, դրա հա-

---

<sup>5</sup> *Политика. Толковый словарь. — М.: "ИНФРА-М", Издательство "Весь Мир". Д. Андерхилл, С. Барретт, П. Бернелл, П. Бернем, и др. Общая редакция: д.э.н. Осадчая И.М.. 2001., <http://dic.academic.ru/dic.nsf/politology/3562>*

<sup>6</sup> «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ ենթակետը ընդունված 2015թ., ՀՕ-16-Ն

<sup>7</sup> *Военно-промышленный комплекс, [http://www.gumer.info/bibliotek\\_Buks/Econom/world\\_econom/20.php](http://www.gumer.info/bibliotek_Buks/Econom/world_econom/20.php)*

մար չունենալով անհրաժեշտ ժամանակ և փորձառություն:

Կատարված ուսումնասիրությունները ցույց տվել, որ ներկայումս ռազմարդյունաբերական ձեռնարկությունների արտադրական և գիտատեխնիկական ներուժի օգտագործումը տարեկան կտրվածքով կազմում է միջինը 50-60%: Ձեռնարկությունների գրեթե 90%-ը կատարում է միայն ռազմական պատվեր: Պետական բաժնեմասով ձեռնարկությունների գործունեությունը հիմնված է միայն պետական պատվերների ֆինանսական միջոցների վրա և գրեթե բացակայում են այլ ֆինանսական հոսքերը, արդյունավետ չի գործում կառավարման վարչական ապարատը, ցածր է շահութաբերությունը:

Մինչ այժմ ռազմարդյունաբերության կայացման գործընթացը անցել է հետևյալ ճանապարհը՝ 1991թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ կառավարությունում ստեղծվել է ռազմարդյունաբերական հանձնաժողովը և կայացել է առաջին նիստը<sup>8</sup>: 1993թ. հունիսին ՊՆ-ի կազմում ստեղծվել է ռազմարդյունաբերական վարչությունը<sup>9</sup>: 2016թ. կազմավորվել է ՀՀ ՊՆ ռազմարդյունաբերության պետական կոմիտեն:

Ռազմարդյունաբերական համալիրի կայացման գործընթացը բաժանվել է ըստ փուլերի՝

1. Արցախյան պատերազմի տարիներ՝ մինչև 1994թ.:
2. Հետպատերազմյան տարիներ՝ մինչև 2001թ.:
3. 2001-ից մինչև 2010թ.:
4. Բարեփոխումների փուլ՝ 2010-ից մինչ այժմ:

Ռազմարդյունաբերական համալիրի SWOT վերլուծության արդյունքում գնահատվել են համալիրի առկա վիճակի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման հնարավորություններն ու սպառնալիքները: Ոլորտի ուժեղ կողմերի և հնարավորությունների իրացման պարագայում հնարավոր է հաղթահարել առկա թույլ կողմերն ու սպառնալիքները, ինչն էլ կապահովի ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը:

**Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի կառավարման կատարելագործման հիմնական ուղղությունները»** գլխում առաջարկվել է ՀՀ ՊՆ ՌԱՊԿ նոր կառուցվածք, ռազմատնտեսագիտության ներդրում, կառավարման ավտոմատացված համակարգի ներդրում, կոնցեռների ստեղծում, կոնցեռնիոն կառավարման համակարգի ներդրում: Կատարվել են առաջարկություններ ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագրի մշակման վերաբերյալ:

Վերլուծելով ռազմարդյունաբերական համալիրների կառավարման կազմակերպական կառուցվածքների միջազգային փորձը, ՀՀ ռազմարդյունաբերության պետական կոմիտեի ներկայիս կառավարման կազմակերպական կառուց-

<sup>8</sup> Վարչության գործունեության մասին, <http://www.mil.am/hy/pn/317/18/131/p/about>


<sup>9</sup> Աղբյուրը՝ ՀՀ ՊՆ ՌԱՊԿ արխիվ

վածքը և դրանից բխող հիմնախնդիրները՝ առաջարկվել է «*ռազմարդյունաբերության պետական կոմիտեի կառավարման նոր կազմակերպական կառուցվածքը* (գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Վ Ո Ղ Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Մ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



Կոմիտեի նոր կառուցվածքում առաջարկվել է ավելացնել մի շարք ստորաբաժանումներ, որոնց գործառույթները գործող կառուցվածքով Կոմիտեն չի իրականացնում: Դրանք են՝ գնումների փաստաթղթերի ձևակերպման բաժինը, ռազմատնտեսական զարգացման վարչությունը (իր բաժիններով), ֆինանսական բաժինը և հաշվապահական հաշվառման բաժինը: Ներկայացվել է մշակված կառուցվածքով Կոմիտեի բոլոր վարչությունների և բաժինների գործառույթները, հիմնավորվել է առաջարկվող կառուցվածքի առավելություններն ու ներդրման անհրաժեշտությունը:

Ինչպես արտացոլվել է « *ՊՆ ռազմարդյունաբերության պետական կո-*

միտեի նոր կազմակերպական կառուցվածքում, Կոմիտեի կառավարման ներքո ներկայացված է «Ռազմափոխնիկական գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ: Ներկա դրությամբ այդ ՊՈԱԿ-ը ստեղծված չէ, սակայն «ՀՀ ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով» նախատեսված է նման կազմակերպության ստեղծում:

Հաշվի առնելով ռազմական ոլորտի տնտեսական ապահովման էական առանձնահատկությունները՝ առաջարկվել է մտցնել և կիրառել «ռազմատնտեսագիտություն» հասկացությունը: Ռազմափոխնիկական գիտությունը բնորոշվել է որպես բանակաշինության, պետության պաշտպանունակության ամրապնդման և պատերազմի վարման տնտեսական հիմքերի մասին գիտելիքների համակարգ: Դա տնտեսագիտության ճյուղ է, որն ուսումնասիրում է ռազմական նախանշանակման ապրանքների արտադրության, բաշխման, փոխանակման (շրջանառության) և սպառման հետ կապված հասարակական-տնտեսական հարաբերությունները<sup>10</sup>:

Ռազմատնտեսագիտության հետազոտության սուբյեկտ են զինված ուժերի և ռազմական նախանշանակման ապրանքների արտադրության, պաշտպանական համակարգի համար այլ անհրաժեշտ նյութական ռեսուրսների ձեռքբերման ոլորտները և դրանք կարգավորող հարաբերությունները:

Առաջարկվել է նոր ստեղծվելիք «Ռազմատեխնիկական գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ում ստեղծել գիտամեթոդաբանական ստորաբաժանում, որը կզբաղվի ռազմատնտեսագիտության հետևյալ հիմնական գործառույթներով՝

1. Ռազմատնտեսագիտության արդյունավետ մոդելի մշակում և կիրառում,
2. Ռազմատնտեսագիտության խնդիրների լուծման համար անհրաժեշտ միջոցառումների կատարում,
3. Բյուջետային հայտերի կազմման մեթոդիկայի կատարելագործման կառուցակարգերի մշակում և ներկայացում,
4. շուկայական հարաբերությունների պայմաններում ռազմական ոլորտում գործող տնտեսական օրենքների ուսումնասիրություն և դրա կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակում,
5. ռազմատնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության ուսումնասիրություն մակրո և միկրոմակարդակներում (այսինքն՝ ամբողջ Հինված ուժերի և առանձին զորամասերի մակարդակներով),
6. շուկայական հարաբերությունների պայմաններում ռազմատնտեսական պահանջումների և դրանց բավարարման ուղիների վերլուծություն, ռազ-

<sup>10</sup> Տվյալ սահմանումը ձևակերպված է ընդունված փոփոխագիտական սահմանումների հաշվառմամբ:

մատնտեսական կառավարման հիմնական ուղղությունների կատարելագործում,  
7. գիտատեխնիկական ներուժի ներդրման ուղիների մշակում,  
8. Զինված ուժերի և շրջակա միջավայրի փոխգործության ուսումնասիրում (բնապահպանական ուղղություն), և այլն:

Ինչպես արտացոլվել է ՀՀ ՊՆ ռազմարդյունաբերության պետական կոմիտեի նոր կազմակերպական կառուցվածքում (գծապատկեր 1), առաջարկվել է Կոմիտեի կառավարման ներքո ստեղծել «ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի միասնական նյութատեխնիկական մատակարարման կազմակերպություն» ՊՈԱԿ: ՀՀ ռազմարդյունաբերության ոլորտում առկա են հիմնախնդիրներ կապված նյութատեխնիկական միջոցների որակական հատկանիշների և դրանք ժամանակին ձեռքբերման հետ: «ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի միասնական նյութատեխնիկական մատակարարման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործունեությունը կարևոր դերակատարություն կունենա ռազմարդյունաբերական համալիրի կառավարման օպտիմալացման առումով: Համալիրի ընկերությունները կխնայեն մարդկային, ֆինանսական, ժամանակային ռեսուրսներ նյութատեխնիկական միջոցների ձեռքբերման գործում: Ներկայացվել են նաև առաջարկվող «ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի միասնական նյութատեխնիկական մատակարարման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի խնդիրներն ու գործառույթները, կառուցվածքը: ՊՈԱԿ-ի ստեղծմամբ՝

1. կնվազեն ընկերությունների վերադիր ծախսերը՝ նյութերի և համալրող մասերի ձեռքբերմամբ զբաղվող անձնակազմի ապահովման և տեղափոխման ծախսերի հաշվին,

2. ընկերությունները պատասխանատու չեն լինի արտադրության նյութերի և համալրող մասերի որակի և ժամանակին մատակարարման ռիսկերի համար,

3. համալիրի միասնական նյութամատակարարումը կկազմակերպվի համակարգված և գիտականորեն հիմնավորված ծավալներով՝ հաշվի առնելով «մատակարարման օպտիմալ ծավալ» հասկացությունը, և այլն:

ՀՀ ռազմարդյունաբերական համալիրում չկա միասնական կառավարման ավտոմատացված համակարգ և սուբյեկտների միջև տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև փաստաթղթաշրջանառությունը կատարվում է թղթային եղանակով՝ նվազեցնելով համալիրի կառավարման օպերատիվությունը:

*Կառավարման ավտոմատացված համակարգը* կառավարվող օբյեկտի կազմ-հաստիքային կառուցվածքին համանման կառուցվածք ունեցող տարածքային հիերարխիկ բազմաօբյեկտ ավտոմատացված համակարգ է, որի օբյեկտները գինված են համակարգչային և կապի ժամանակակից միջոցներով և իրար հետ իրականացնում են ինֆորմացիայի փոխանակում:

Այս տեսանկյունից կարևորվել է ՀՀ ռազմարդյունաբերական համալիրում ռազմարդյունաբերական համալիրի սուբյեկտների կառավարման ավտոմատաց-

ված համակարգի ներդրումը: Որպես համակարգի նպատակ նշվել է՝ ռազմարդյունաբերական համալիրի գործունեության սուբյեկտների զարգացման բարենպաստ պայմանների ստեղծման համար պետական պատասխանատվությունը, կատարողի նկատմամբ հսկողության իրականացումը, ռազմական ապրանքի և գույքի մատակարարման համար հատկացված բյուջետային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը, աշխատանքների օպերատիվ կազմակերպումը և տեղեկատվության արագ հասանելիության ապահովումը:

Մշակվել են նաև համակարգի խնդիրները, բաղադրիչները: Նշված ավտոմատացված համակարգը պետք է հավաքագրի արտադրատեսակների մշակման, արտադրության և հետագա սպասարկման ցիկլի ավտոմատացված հաշվառման և գնային քաղաքականության արժանահավատորեն կառավարման մի ամբողջ խնդիրների լուծումներ, որոնց համար մշակվել են համապատասխան ենթահամակարգերը:

« Ռազմարդյունաբերական համալիրի կարևորագույն խնդիրներից է դրա կազմի մեջ մտնող կազմակերպությունների արդյունավետ և կայուն գործունեության ապահովումը: « Ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպությունների միջև կազմակերպված համագործակցությունը թերի է, ինչի հետևանքով որոշ աշխատանքներ կրկնվում են մի քանի կատարողների կողմից, չկա արտադրական կոոպերացիա: « Ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպությունների մեծ մասում կա կառավարման համակարգի արմատական փոփոխման անհրաժեշտություն: Ուսումնասիրված գրեթե բոլոր երկրներում ռազմարդյունաբերական հիմնական ընկերությունները պետական կոնցեռներ են:

« Ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպությունների կառավարման արդյունավետ ձև կարող է լինել դրանց միավորումը պետական կոնցեռներում: Կոնցեռնը ինքնուրույն կազմակերպությունների այնպիսի միավորում է, որի մասնակիցները փոխկապված են մասնակցության համակարգի, արտոնագրային լիցենզիոն համաձայնությունների, ֆինանսավորման, սերտ արտադրական գործակցության միջոցով<sup>11</sup>: Միավորվելով կոնցեռնում՝ կազմակերպությունները պահպանում են իրենց ինքնուրույնությունը և սերտորեն համագործակցում են գործունեության տարբեր ոլորտներում: Առաջարկվել է Հայաստանի Հանրապետությունում ստեղծել պետական կոնցեռներ ըստ հետևյալ ուղղությունների՝ մեքենաշինություն, ռադիո-էլեկտրոնիկա, օպտիկա-էլեկտրոնային և լազերային սարքաշինություն, ռազմական քիմիա: Կոնցեռնի ձևավորումը կնպաստի նաև մասշտաբի և սիներգիայի էֆեկտների առաջացմանը, ինչը համապատասխանաբար ենթադրում է արտադրության ծավալների ավելացման դեպքում միավոր արտադրանքի արտադրության վրա կատարված ծախսերի նվազում և փոխգործության շնորհիվ ընկերությունների ստեղծած արդյունքի գե-

<sup>11</sup> М. Г. Диканский, В. А. Шильдкрут. Международные монополии. Возникновение и развитие важнейших международных картелей. М., 1966, с. 6

րազանցում դրանց առանձին-առանձին վերցված արդյունքների գումարից:

Վերջին 25 տարիներին ռազմարդյունաբերական համալիրի պետական բազմաթիվ ընկերություններ մասնավորեցվել են, հույս ունենալով, որ մասնավորը կկարողանա առողջացնել ընկերությունը, սակայն գործնականում հիմնական դեպքերում տեղի է ունեցել հակառակը: Այդ կազմակերպությունների մեծ մասը կամ փակվել են, կամ փոխել են իրենց գործունեության ոլորտը: Հաստոցային պարկը մասնավորեցումից կարճ ժամանակ հետո օտարվել է, որի հետևանքով ոչնչացվել է արտադրական ներուժը: Մասնավորեցման կիրառված ձևը անարդյունավետ էր, հատկապես, որ պետք էր որպես պարտադիր պայման նշվեր օրինակ հիմնական ֆոնդերի չօտարման պահանջը: Մասնավորեցված 32 ընկերություններից ներկայումս ռազմական պատվերներ են կատարում 10 ընկերություններ<sup>12</sup>: Նմանօրինակ իրավիճակներից խուսափելու համար առաջարկվել է որպես սկզբունք ընդունել մնացած ռազմարդյունաբերական համալիրի պետական ընկերությունները չմասնավորեցնելը, հարկ եղած դեպքում որպես մասնավորեցման այլընտրանք կիրառել *հավատարմագրային կառավարումը*:

Կոնցեսիոն կառավարումը դիտվում է որպես ապապետականացման հիմնական ձև և պետական սեփականության մասնավորեցմանն այլընտրանք:

Ըստ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 954-րդ հոդվածի՝ «Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով մեկ կողմը (կառավարման հիմնադիրը) որոշակի ժամկետով գույք է հանձնում մյուս կողմի (հավատարմագրային կառավարչի) հավատարմագրային կառավարմանը, իսկ մյուս կողմը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի (շահառուի): Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում հավատարմագրային կառավարչին դրա նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման: Հավատարմագրային կառավարիչն իրավունք ունի գույքի հավատարմագրային կառավարում իրականացնելիս այդ գույքի նկատմամբ, հավատարմագրային կառավարման պայմանագրին համապատասխան և ի շահ շահառուի, կատարել ցանկացած իրավաբանական ու փաստացի գործողություններ: Գույքի հավատարմագրային կառավարմանն ուղղված առանձին գործողությունների նկատմամբ օրենքով կամ պայմանագրով կարող են նախատեսվել սահմանափակումներ»<sup>13</sup>:

Ներկայումս կոնցեսիաները համարվում են պետական և մասնավոր հատվածի համագործակցության ավելի զարգացած, առաջադիմական և համալիր ձև, քանի որ.

1. ի տարբերություն պայմանագրային հարաբերությունների՝ դրանք կրում են բազմանպատակ և երկարաժամկետ բնույթ, ինչը երկու կողմերին հնարա-

<sup>12</sup> Աղբյուրը՝ համաձայն ՀՀ ՊՆ ՌԱՊԿ կողմից տրամադրված տեղեկատվության

<sup>13</sup> ՀՀ Քաղաքացիական օրենսգրքը, հոդված 954, Ընդունված Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին

վորություն է տալիս կատարելու իրենց գործունեության ռազմավարական կանխատեսում և պլանավորում,

2. կոնցեսիաների դեպքում մասնավոր հատվածն ունի վարչատնտեսական և կառավարչական որոշումների ընդունման լիակատար ազատություն,

3. պետությունը, այնուամենայնիվ, կոնցեսիոն պայմանագրի շրջանակներում ունի կոնցեսիոնների վրա ներգործելու հզոր լծակներ՝ նրա կողմից կոնցեսիայի պայմանների խախտման դեպքում: Անհրաժեշտության դեպքում պետությունն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնելու կոնցեսիան՝ կոնցեսիոններին փոխհատուցում վճարելով,

4. կոնցեսիոն նախագծերում ռիսկերը վերաբաշխվում են բոլոր մասնակիցների միջև (պետություն, կոնցեսիոներ, ներդրողներ, ֆինանսական հաստատություններ, ապահովագրական ընկերություններ և այլն), ինչի շնորհիվ էականորեն մեծանում է կոնցեսիոն նախագծի կենսունակությունը:

Հաշվի առնելով ռազմարդյունաբերության ոլորտի նշանակությունը՝ կոնցեսիոն կառավարումը կարող է դիտվել որպես ոլորտի կազմակերպությունների կառավարման լավագույն տարբերակ, այլընտրանք հանդիսանալով դրանց մասնավորեցմանը:

«Վարչապետի 2015թ. հուլիսի 24-ի N°668-Ա որոշմամբ<sup>14</sup> հաստատված «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ծրագրով նախատեսված է ««Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը ՀՀ Նախագահին ներկայացնելը» միջոցառումը, ինչն այժմ գտնվում է մշակման փուլում: Աշխատանքում ներկայացվել են մի շարք առաջարկություններ՝ ծրագրի կազմման ձևաչափի, կառուցվածքի վերաբերյալ: Առաջարկվել է մշակել՝

1. ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի պետական ընկերությունների տեխնոլոգիական զարգացման ծախսային (ներդրումային) ծրագիր:

2. ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի պետական ընկերությունների տեխնիկական զարգացման ծախսային (ներդրումային) ծրագիր:

3. ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի ընկերությունների աջակցման ծրագիր:

4. ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի պետական ընկերությունների բիզնես-պլաններ:

5. Ռազմարդյունաբերական ոլորտում կադրերի պատրաստման ծրագիր:

ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագիրը պետք է հանդիսանա ոլորտի ամբողջական և բազմակողմանի զարգացման առաջնային փաստաթուղթը, պատասխանելով՝ ի՞նչ, ինչու՞, ե՞րբ, որտե՞ղ, ինչ-

<sup>14</sup> ՀՀ վարչապետի որոշումը «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին, N° 668-Ա, 2015թ.

պե՛ս, ու՛մ միջոցով հարցերին: Ծրագրի հնարավորինս մանրամասն ու հիմնավոր մշակումից և իրականացումից է կախված ոլորտի զարգացումը, հետևապես նաև ՀՀ ռազմական և ազգային անվտանգությունը, կշիռն ու դերակատարությունը համաշխարհային և տարածաշրջանային գործընթացներում:

Ատենախոսությունը եզրափակվում է **եզրակացություններով**, որտեղ ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները և կարևոր եզրահանգումները.

❖ . Ռազմարդյունաբերական համալիրը գիտական, գիտաարտադրական, արտադրական և այլ բնույթի կազմակերպությունների ու պետական մարմինների համակարգ է, որի գործունեությունն ուղղված է պետության ռազմատեխնիկական քաղաքականության կենսագործմանը<sup>15</sup>: Ազգային անվտանգությունը, որպես պետության և հասարակության հիմնական պահանջմունք, անհրաժեշտ պայման է պետության քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր գործառույթների հաջող իրականացման համար: Ուստի պետությունը պետք է անընդհատ ուշադրության տակ պահի ռազմարդյունաբերական համալիրի զարգացման հիմնախնդիրները:

❖ . Ռազմարդյունաբերության ոլորտը զարգանում է ամբողջ աշխարհում, հատկապես տարածքային հակամարտություն ունեցող երկրներում: Տարածքային հակամարտություն ունեցող երկրի համար չափազանց կարևոր է այս ոլորտի զարգացումը: Ռազմարդյունաբերության ոլորտի զարգացումը արտասահմանյան երկրները սկսել են իրենց ազգի, քաղաքացիների ամբողջ ներուժի կենտրոնացմամբ, ռազմաքաղաքական ղեկավարության ցանկությամբ, պետական նպատակային արդյունավետ ծրագրերի իրականացմամբ:

❖ . Որպես տնտեսության ոլորտ՝ ռազմարդյունաբերությունը պետության կողմից ամենաշատն է ենթարկվում պետական ուղղակի կարգավորման՝ հաշվի առնելով դրա կարևորությունը՝ ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից: Ռազմարդյունաբերական համալիրների կառավարմամբ և անմիջական վերահսկողությամբ զբաղվում են երկրների ռազմաքաղաքական ամենաբարձր պաշտոնյաները:

❖ . ԽՍՀՄ տարիներին Հայաստանն ուներ զարգացած ռազմարդյունաբերություն, իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրը սկսեց իր կայացման գործընթացը, երբ երկիրը փաստացի գտնվում էր պատերազմական վիճակի և շրջափակման մեջ, երբ փոփոխվում էր հանրապետության տնտեսության կառավարման կացութաձևը:

❖ . Ռազմարդյունաբերության ոլորտը Հայաստանի Հանրապետությունում անցել է իր կայացման և զարգացման փուլերը, ներկայումս գտնվում է բարեփոխումների փուլում, ընդունվել են ոլորտը կարգավորող բազմաթիվ իրավական

<sup>15</sup> «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ ենթակետը ընդունված 2015թ., ՀՕ-16-Լ

ակտեր, ստեղծվել է ՀՀ ՊՆ ռազմարդյունաբերության պետական կոմիտեն:

❖ . ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացման հիմնախնդիրների բացահայտման նպատակով իրականացվել է SWOT վերլուծություն, որի միջոցով գնահատվել են համալիրի առկա վիճակի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման հնարավորություններն ու սպառնալիքները:

❖ . Ներկայում առկա են ոլորտի զարգացման մի շարք խոչընդոտներ, որոնցից են՝ արտադրական կոոպերացիայի ցածր մակարդակը, կադրային քաղաքականությունը, պատվերների քիչ քանակության հետևանքով կազմակերպությունների արտադրական թերբեռնվածությունը, արտադրանքի քիչ տեսականին, ընկերությունների տեխնիկական վիճակը, երկարաժամկետ նպատակային ծրագրերի բացակայությունը, տեխնիկական փաստաթղթերի պակաս լինելը, մարքեթինգի ցածր մակարդակը արտաքին շուկաներում, արտադրանքի արտահանման գրեթե բացակայությունը, հատուկ համալրող մասերի մատակարարման ժամկետների խզումները, կազմակերպություններում քաղաքացիական նշանակության արտադրանքի խիստ ցածր մակարդակը, ոլորտի կազմակերպությունների կառավարման միջազգային չափանիշներին համապատասխան մենեջերների բացակայությունը, կառավարման ավտոմատացված համակարգի բացակայությունը, հիմնարար երկարաժամկետ գիտահետազոտական աշխատանքների պայմանագրերի կնքման կառուցակարգերի բացակայությունը, և այլն:

❖ . Մշակվել է կոմիտեի կառավարման նոր կազմակերպական կառուցվածք, ինչը թույլ կտա կոմիտեին՝ վարելու ինքնուրույն ռազմատեխնիկական քաղաքականություն, տարանջատելու սպառազինության և ռազմական տեխնիկայի կատարողին, պատվիրատուին և շահագործողին, և այլն: Մշակվել են նաև առաջարկվող կառուցվածքի հիմնական ստորաբաժանումների գործառույթները:

❖ . Առաջարկվել է մտցնել և կիրառել «ռազմատնտեսագիտություն» հասկացությունը: Ռազմատնտեսագիտությունը կարելի է բնորոշել որպես բանակաշինության, պետության պաշտպանունակության ամրապնդման և պատերազմի վարման տնտեսական հիմքերի մասին գիտելիքների համակարգ: Սահմանվել են նաև ռազմատնտեսագիտության հետազոտության սուբյեկտները, ուսումնասիրության ոլորտը, գերակա խնդիրները, դրանց լուծման համար անհրաժեշտ միջոցառումները: Ռազմատնտեսագիտության հիմնական գործառույթները առաջարկվել է իրականացնել նոր ստեղծվելիք մարմնի՝ «Ռազմատեխնիկական գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից:

❖ . Առաջարկվել է հիմնավորվել ՀՀ ՊՆ ռազմարդյունաբերության պետական կոմիտեի ենթակայությամբ «ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի միասնական նյութատեխնիկական մատակարարման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ստեղծման անհրաժեշտությունը՝ ռազմարդյունաբերական համալիրի կառավարման օպտիմալացման առումով՝ ապահովելով ոլորտի միասնական և համա-

կարգված նյութատեխնիկական իրականացումը, մշակվել են ՊՈԱԿ-ի և ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների կառուցակարգերը, ՊՈԱԿ-ի խնդիրներն ու գործառնությունները, հիմնավորվել են ՊՈԱԿ-ի պահպանման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների աղբյուրները և ՊՈԱԿ-ի ստեղծման ակնկալվող արդյունքները:

❖ . Առաջարկվել է ներդնել ՀՀ ՌԱՀ սուբյեկտների կառավարման ավտոմատացված համակարգ: Կառավարման ավտոմատացված համակարգը կառավարվող օբյեկտի կազմ-հաստիքային կառուցվածքին համանման կառուցվածք ունեցող տարածքային հիերարխիկ բազմաօբյեկտ ավտոմատացված համակարգ է, որի օբյեկտները զինված են համակարգչային և կապի ժամանակակից միջոցներով և իրար հետ իրականացնում են տեղեկատվության փոխանակում: Սահմանվել են առաջարկվող համակարգի նպատակները, խնդիրները, մշակվել են դրա ենթահամակարգերը, հիմնական բաղադրիչները, համակարգին ներկայացվող պահանջները:

❖ . ՀՀ ՌԱՀ-ի կազմակերպությունների կառավարման բարելավման նպատակով առաջարկվել է դրանց միավորումը պետական կոնցեռներում, հիմնավորվել է ռազմարդյունաբերական համալիրի ընկերությունների՝ կոնցեռներում միավորվելու առավելությունները, առաջարկվել են ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի կոնցեռների հիմնական ուղղությունները:

❖ . Առաջարկվել է կիրառել հավատարմագրային կամ կոնցեսիոն կառավարումը՝ որպես ռազմարդյունաբերական համալիրի պետական ընկերությունների մասնավորեցման այլընտրանք: Կոնցեսիոն կառավարումը ազատ շուկայական տնտեսության պայմաններում համարվում է մասնավոր հատվածի կողմից պետական սեփականության կառավարման արդյունավետ ձև, պետական սեփականության մասնավորեցմանն այլընտրանք:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Մ. Ռ. Իսախանյան, Ա. Ռ. Թովմասյան, «Ռազմատնտեսագիտության հասկացությունը և խնդիրները ՀՀ պաշտպանական բարեփոխումների համատեքստում», ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես 4(66). 2010, ք. Երևան, էջ 51-56,

2. Ա. Պ. Պետրոսյան, Ա. Ռ. Թովմասյան, «ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացման տնտեսական նախադրյալները», ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես 3 (69). 2011, ք. Երևան, էջ 25-34,

3. Հ. Ի. Գևորգյան, Ա. Ռ. Թովմասյան, «ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացման օրենսդրական հիմքերի հարցի շուրջ», ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես 3 (69). 2011, ք. Երևան, էջ 54-60,

4. Մ. Ռ. Իսախանյան, Ա. Պ. Պետրոսյան, Ա. Ռ. Թովմասյան, Գ. Ռ. Թովմասյան, «Կառավարման նոր տարրերի ներդրումը՝ որպես ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացման նախադրյալ», ՀՀ ՊՆ Դ. Կանա-յանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես 3 – 4 (77-78). 2013, ք. Երևան, էջ 68-77,
5. Ա. Ռ. Թովմասյան, «Կառավարման ավտոմատացված համակարգի դերն ու նշանակությունը ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի կառավարման գործում», «Հանրային կառավարում» գիտական հանդես 2/2017, ք. Երևան, 2017թ., էջ 10-15,
6. Ա. Ռ. Թովմասյան, «ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացման համար խոչընդոտների և դրանց հաղթահարման ուղիների որոշման հարցի շուրջ. ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես 1-2 (91-92), ք. Երևան, 2017թ., էջ 48-56,
7. Ա. Ռ. Թովմասյան, «Կառավարման կազմակերպական նոր կառուցվածքի ներդրման հնարավորությունները ՀՀ ՊՆ Ռազմարդյունաբերության պետական կոմիտեում», «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, #5-6 (201-202), ք. Երևան, 2017թ., էջ 4-7,
8. Ա. Ռ. Թովմասյան, ««Ռազմարդյունաբերական համալիր» հասկացու-թյունը, ոլորտի դերն ու նշանակությունը», «Տնտեսության զարգացման և կառա-վարման հիմնախնդիրներ» պարբերական, Գիրք 10, ք. Երևան, 2017թ., էջ 334-337,
9. Ա. Ռ. Թովմասյան, «Իսրայելի Պետության ռազմարդյունաբերական համալիրի ձևավորումն ու կառավարումը», «Պատմություն և մշակույթ» հանդես, ք. Երևան, 2017թ., էջ 146-153:

## ТОВМАСЯН АШОТ РУБИКОВИЧ

### ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ И УПРАВЛЕНИЯ ВОЕННО-ПРОМЫШЛЕННОГО КОМПЛЕКСА В СТРАНАХ ИМЕЮЩИХ ТЕРРИТОРИАЛЬНЫЙ КОНФЛИКТ (ПО ПРИМЕРУ РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 — "Экономика, управление хозяйством и его сферами".

Защита диссертации состоится 24-го ноября 2017г., в 13<sup>30</sup> на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х. Абовяна 52.

### РЕЗЮМЕ

Одним из наиболее важных направлений реформ, проводимых в Республике Армения в области экономики и армейского строительства является реформа военной промышленности, развитие которой требует существенных изменений в нескольких смежных областях. Военно-промышленный сектор является двигателем экономического развития.

Сегодня военно-промышленная сфера сталкивается с рядом препятствий развития, такими, как отсутствие долгосрочных целевых программ, отсутствие квалифицированных менеджеров, соответствующих внедряемой в компаниях форме экономического управления, отсутствие автоматизированной системы управления, миграция, пробелы в системе подготовки людских ресурсов. Кроме того, не проводилось фундаментальных исследований в области развития военно-промышленной сферы. Вышеупомянутыми проблемами обуславливается актуальность и значимость темы настоящей диссертации.

**Цель исследования** состояла в том, чтобы на основе системного изучения и анализа текущих проблем упомянутой сферы выявить особенности военно-промышленности РА, а также разработать теоретические и практические основы совершенствования системы управления упомянутой сферы и определить основные направления совершенствования системы управления военно-промышленным комплексом.

Для этой цели были поставлены нижеследующие задачи:

- изучить теоретико-методологические основы и механизмы формирования и развития военно-промышленного комплекса,
- изучить международный опыт управления и развития военной промышленности,
- проанализировать текущее состояние военно-промышленного комплекса и вопросы его развития в РА,
- изучить законодательство военно-промышленного комплекса РА с целью выявления направлений его совершенствования,

- проанализировать эффективность ценовой политики в военно-промышленной сфере,
- выявить пути совершенствования управления военно-промышленным комплексом.

**Научная новизна** диссертации заключается в следующем:

1. Обоснована необходимость применения военной экономики в качестве отдельного научного направления, имеющего своей целью создание и развитие экономических основ армейского строительства и обеспечения обороноспособности государства. Определены основные субъекты военно-экономического исследования, сфера исследования, основные проблемы и необходимые мероприятия по их решению.

2. На основании результатов анализа текущей организационной структуры управления Государственного военно-промышленного комитета Министерства обороны РА, а также на основе анализа международного опыта, предложена новая организационная структура управления, были разработаны основные функции отделов предлагаемой структуры. Обоснована важность создания ГНКО «Организация единого материально-технического обеспечения ВПК», подотчетной Комитету, были разработаны механизмы взаимоотношений между предприятиями оборонно-промышленного комплекса и упомянутой ГНКО, были определены задачи и функции, источники финансирования ГНКО и ожидаемые результаты ее деятельности.

3. В целях повышения эффективности военно-промышленного комплекса РА была предложена и обоснована необходимость внедрения автоматизированной системы управления для управления субъектами ВПК, были разработаны ее структура, цели, задачи, подсистемы, основные компоненты и требования предъявляемые к системе. В целях совершенствования управления предприятиями военно-промышленного комплекса РА было предложено их объединение в государственные концерны, были обоснованы преимущества такого объединения и основные направления деятельности государственных концернов.

4. В результате анализа многолетнего опыта и текущего состояния военно-промышленного комплекса РА, было рекомендовано применять принципы концессионного управления на государственных предприятиях военной промышленности, в качестве альтернативы приватизации. Была доказана применимость указанных принципов управления.

## **TOVMASYAN ASHOT RUBIK**

### **FEATURES OF THE FORMATION AND MANAGEMENT OF THE MILITARY-INDUSTRIAL COMPLEX IN THE COUNTRIES HAVING TERRITORIAL CONFLICT (BY THE EXAMPLE OF RA)**

The abstract of the thesis submitted for pursuing of scientific degree of PhD in Economics in the speciality 08.00.02 — “Economics, Management of the Economy and its Spheres”.

The defense of the thesis will take place on November 24, 2017, at 13<sup>30</sup> at the session of the Specialized Council 015 in Economics of the SCC of the RA acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia

#### **A B S T R A C T**

One of the most important sectors of Armenia's economy in which military reforms are carried out is military industry, the development of which requires significant changes in several related fields. Military sector is an engine for economic development.

Today, the military-industrial sphere faces a number of obstacles of development, such as the absence of long-term targeted programs, lack of managers at companies appropriate to the current form of economic management, absence of mechanisms of signing contracts of fundamental long-term research activities, absence of automated management system, migration, gaps in the human resources preparation system. In addition, there is no any extensive research work on the development of the sector. The above mentioned problems make the theme of the thesis actual and urgent.

The aim of the study is: based on the systemic research and analysis of the problems of the military-industrial sphere of the RA to reveal the characteristics, theoretical and practical bases for improving the management of that sphere and to develop the main ways of improvement of its management.

For that purpose the following objectives were set:

- to study the theoretical-methodological bases and mechanisms of formation and development of military-industrial complex,
- to explore the international experience of management and development of the military industry,
- to analyze the current state of the military-industrial complex and development issues in the RA,
- to study the legislation of military-industrial complex of the RA in order to find out areas of improvement,
- to analyze the effectiveness of pricing policy in the military-industrial sphere,
- to find out ways of improving the management of the military industrial complex.

From the main results the scientific novelty of the thesis is as follows:

1. The necessity of applying the military economics as a separate scientific direction was proved, aimed at creating and developing the economic bases of providing the army building of the RA and defensibility of the country, the research object, subjects of the military economics, its main issues and ways for solving them were processed.
2. Based on the results of the analysis of the current organizational structure of management and its related issues of the State Military Industrial Committee of Ministry of Defence of the RA, as well as based on the analysis of international experience, a new organizational structure of management was developed and proposed by which was proved the necessity of developing the committee as a state organ under the Ministry of Defense. The main functions of the departments of the proposed structure have been developed. The importance of establishing "Joint logistics organization" SNPO under the regulation of the Committee was proved, the mechanisms of relationship between the organizations of the military-industrial complex and the SNPO, the issues and functions were developed, the financing sources for the maintenance of the SNPO and the expected results were proved.
3. In order to increase the efficiency of the military-industrial complex of the RA it was proposed and proved to invest an automated system of management, its essence, purposes, objectives were defined, its subsystems, the main components and the requirements from that system were developed. In order to improve the management of the companies of the military-industrial complex of the RA it was suggested their insertion in state concerns, the advantages for companies to unite in the concern were proved, also the directions of the concerns of the military-industrial complex were proposed.
4. As a result of analysis of the years of experience and current state of the military-industrial complex of the RA it was recommended to apply the principles of concession management in the state companies of the military industry, as an alternative to privatization, its applicability was proved.

